ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԿԳՄՄՆ Գյումրու թիվ 1 ավագ դպրոց

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Անցանկալի վարքագծի կանխարգելման տեխնիկաների կիրառումը հիմնական դպրոցում

Կատարող՝ Սվետլանա Գալստյան Գագիկի

(անուն,ազգանուն,հայրանուն)

«Գյումրու թիվ 11 հիմնական դպրոց» ՊՈԱԿ , Հասարակագիտություն

(դպրոց, մասնագիտություն,ըստ վերապատրաստման խմբի)

Ղեկավար՝Լաուրա Գրքիկյան

(անուն,ազգանուն)

ԳՅՈՒՄՐԻ 2022

Բովանդակություն

Ներածություն_____2

Անցանկալի վարքագծի դրսևորումներ_____4

Անցանկալի վարքագծի կանխարգելման տեխնիկաների կիրառումը հիմնական դպրոցում_____7

Եզրակացություն_____12

Օգտագործված գրականության ցանկ_____13

Ներածություն

Ուսումնական հաստատությունը այն սոցիալական միջավայրն է, որտեղ աշակերտը ձեռք է բերում անհրաժեշտ սոցիալական հմտություններ, սոցիալապես ընդունելի վարքաձևեր և ձևավորվում որպես սոցիալական էակ: Ընդ որում՝ բազմաթիվ հետազոտությունները փաստում են, որ այսօր սոցիալական հմտությունների ձևավորման կարիք ունեն ոչ միայն զարգացման առանձնահատկություններ ունեցող երեխաները, այլ՝ առհասարակ շատերը:

Սոցիալական հմտությունների ձևավորումը համալիր գործընթաց է, որն իր մեջ ներառում է արժեքներ, գիտելիքներ և հմտություններ:Աշակերտին սոցիալական հմտություններ սովորեցնելու տարբեր մոտեցումներ իմանալը և կիրառելը խիստ էական են, քանի որ մի միջոցը կարող է արդյունավետ լինել մի երեխայի պարագայում և անարդյունավետ՝ մեկ այլ երեխայի առնչությամբ: Հետևաբար տիրապետելով մի քանի մոտեցումների՝ մանկավարժը կարող է մեծ հաջողություն ունենալ բոլոր երեխաների հետ աշխատանքում:Իսկ դա էլ իր հերթին կարող է կանխել անցանկալի վարքագծի դրսևորմանը:

Յուրաքանչյուր մանկավարժ գիտի, որ ուսումնական գործընթացում ամենահաճախ հանդիպող դժվարություններից մեկը, դա անցանկալի վարքագիծն է: Պատմականորեն ընդունված է նման վարքագծի հանդիպելիս,երեխային պատժել,նախատել,խրատել,օրինակ բերել նրա իսկ՝ առավել «լսող» ու «խելոք մնացող» ընկերներին: «Խելոք մնացող» երեխաներն էլ ավելի հաճախ մյուսներին օրինակ են բերվում, քան խրախուսանքի արժանանում: Հետազոտությունները ցույց են տվել,որ դպրոցների մեծ մասում աշակերտները իրենց արարքների համար 4-10 անգամ ավելի շատ նախատինք են լսում,քան ՝ խրախուսանք:

- Ուստի այս հետազոտական աշխատանքի **նպատակն է**.

Պարզել անցանկալի վարքագծի դրդապատճառները: Ծանոթանալ անցանկալի վարքագծի կանխալգելմանն ուղղված միջոցառումներին:

Հայտնի է, որ անցանկալի վարքագծի դրսևորման հավաքականությունը նվազում է պայմանավորված մի շարք գործոններով, որոնց առավել մանրամասն կանրադառնանք այս աշխատանքի մեջ:

Հետազոտական աշխատանքի **խնդիրներն են.**

- Սահմանել «անցանկալի վարքագծի «հասկացությունը
- Ուսումնասիրել անցանկալի վարքագծի կանխարգելման տեխնիկաները
- Առաջարկել նոր լուծումներ անցանկալի վարքագծի կանխարգելման համար:

Ինչպես վերը նշվեց աշակերտները ավելի շատ նախատինք են լսում , քան գովասանք: Բայց պետք է հիշել, որ այսօր նման մոտեցումները հնացած են ու վաղուց չեն դիմանում ժամանակակից մոտեցումների քննադատությանը:Հետևաբար այս թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով , թե այսօր ինչպեսի տեխնիկաների կիրառում է անհրաժեշտ անցանկալի վարքագծի կանխարգելման համար: Հատկապես հիմա ներառող կրթության համատեքստում,աշակերտներին միմյանց հետ համեմատելը ավելի շատ խնդիրներ, քան դրանց հաղթահարում է առաջ բերում: Խրատը,պատիժն ու նախատինքը ավելի շատ բացասական նախատրամադրվածության, քան ցանկալի վարքագիծ դրսևորելու առիթներ են դառնում:

Անցանկալի վարքագծի դրսևորումներ

Մեզանից յուրաքանչյուրն ամեն օր բախվում է սոցիալական անցանկալի վարքագծի տարբեր դրսևորումների հետ։ Մասնագետները տարիներ շարունակ փորձում են գտնել հետևյալ հարցերի պատասխանները. Ինչու՞ են մարդիկ խախտում սոցիալական նորմերը, ինչու՞ որոշ գործողություններ համարվում են շեղվող, իսկ ուրիշները՝ ոչ, ո՞րոնք են այդպիսի վարքագծի պատճառները և նման շատ հարցեր։

Շեղված կամ անցանկալի վարքագիծ է համարվում հասարակության անդամների մեծամասնության կողմից դատապարտելի և անթույլատրելի համարվող վարքագծային շեղումը՝ սոցիալական նորմերից։Սոցիալական նորմն իր արտացոլումն է գտնում օրենքներում,սովորույթներում,ավանդույթներում,այսինքն այն ամենում, ինչը հաստատապես մտել է կենցաղ, բնակչության մեծամասնության կենսակերպ,պաշտպանվում է հասարակական կարծիքով և «բնական կարգավորչի» դեր է խաղում հասարակական և միջանձնային հարաբերություններում ։

Անձի սոցիալական վարքի շեղումներն իրենց արտահայտությունն են գտնում նրա տարբեր անկարգությունների, զանցանքների, իրավախախտումների, հանցագործությունների և տարաբնույթ նեգատիվ դրսևորումների մեջ։ Անձի շեղման նախադրյալները դրվում են նրա օնթոգենետիկական զարգացման սկզբնափուլում, վաղ մանկության և նախադպրոցական տարիքում և աստիճանաբար խորանում, արմատավորվում են հաջորդ տարիքային շրջաններում։

Անցանկալի վարքագծով անձանց առանձին կատեգորիա են անչափահասները, ովքեր ավելի դյուրազգաց են հանցավոր տարրերի նկատմամբ և ավելի շուտ են կրում նրա բացասական կնիքը։ Շեղված վարքագծով անչափահասների ժամանակին հայտնաբերումն ու նրանց հետ համապատասխան կանխարգելիչ աշխատանքի իրականացումը դրականորեն կարող են ազդել նրանց ապագայի վրա։ Այդ բացասական միտումների և նրանց պատճառների բացահայտումը պետական կարևորության խնդիր է, որոնց լուծումից է կախված ամբողջ հասարակության ճակատագիրը։

Անչափահասների մոտ վարքի շեղումները ի հայտ են գալիս այն հասարակության կամ ընտանիքի սոցիալ-մշակութային և դաստիարակչական առանձնահատկություններից, որտեղ ապրում է անչափահասը։Դեռևս մանկության

տարիներից նա յուրացնում է իր ընտանիքին բնորոշ բարոյական նորմեր։ Դա կատարվում է անգիտակցաբար։ Բայց հարկ է նշել, որ յուրաքանչյուր անառողջ ընտանիք իր հետքն է թողնում ապագա սերնդի վրա։ Եթե ընտանիքում ծնողները հակված են գողության և թմրամոլության, ապա հավանակությունը մեծ է, որ այդ ընտանիքի երեխաները նույնապես իրենց վրա կկրեն ընտանիքին բնորոշ սոցիալ-մշակութային արժեքները։ Առողջ ընտանիքում մեծանում է հոգեպես և ֆիզիկապես առողջ երեխա, ով ապահովված է ոչ միայն սոցիալական պայմաններով, այլև՝ սիրով ու հոգատարությամբ։ Անառողջ ընտանիքի երեխաները սիրո և քնքշանքի, ծնողական դաստիարակության պակասը լրացնում են փողոցում՝ գտնելով իրենցից տարիքով մեծ,հակահասարակական վարք ցուցաբերող լիդերների, որոնց դաստիարակությունից էլ ծնվում են ապագա գողերն ու հանցագործները։

Արդի սոցիալ-քաղաքական և տնտեսական վերափոխումների պայմաններում, երբ անչափահասների շեղված վարքագծի տարբեր դրսևորումներ կան, պահանջվում է այդ խնդրի լուծման համալիր մոտեցում։ Այսօրվա դրությամբ անչափահասների շեղված վարքագծի հիմնախնդիրը, նրանց բարոյական անկումը և որոշ դեպքերում նրանց անհնազանդությունը չեն կարող անուշադրության մատնվել։ Դրա վրա ազդում են վատ սոցիալական շրջապատի գործոնը,ապրուստի,սոցիալական և նյութական պայմանները և այլն։

Անչափասների անցանկալի վարքագծի հաղթահարման համար մասնագետները առաջարկում են հետևյալ ուղիները։

- Ուսումնական գործընթացի ժամանակ անչափահասների վրա մշտական ուշադրություն դարձնելը, մասնավորապես՝ խոսել նրանց առօրյաի մասին,խորհուրդ տալ ազատ ժամանակն օգտագործել արդյունավետ ու օգտակար նպատակների համար։
- Ուսումնական հաստատությունների, ինչպես նաև իրավական և սոցիալական հիմնախնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների կողմից հաճախակի հավաքների, սեմինար-քննարկումների, նաև գիտաժողովների կազմակերպումը նվիրված հասարակության մեջ քաղաքացիների դերակատարությանը, նրանց կողմից վարքագծի դրսևորումներին և այլն։

- Հաշվի առնելով այն հանգամանքը, որ անչափահասները հաճախ շեղվում են ճիշտ վարքագծից զբաղմունքի բացակայության պատճառով, առաջարկվում է հատկապես ավագ սերնդի ներկայացուցիչների կողմից նրանց աշխատանքն ու ազատ ժամանցը հնարավորինս հետաքրքիր ու բովանդակալից կազմակերպել։

Անցանկալի վարքագծի կանխարգելման տեխնիկաների կիրառումը հիմնական դպրոցում

Յուրաքանչյուր ուսուցիչ կամ դաստիարակ գիտի, որ խնդրահարույց վարքագիծը, որը երեխան դրսևորում է դպրոցում, չի կարող միշտ կրճատվել նույն տեխնիկայով, ինչ տանը: Հաճախ ռազմավարությունները, որոնք կարող են կիրառել տանը, չեն կարող օգտագործվել դպրոցում:Օրինակ, եթե բարձր ճիչերը կարող են անտեսվել տանը, ապա դպրոցական միջավայրում նրանք կարող են լրջորեն խանգարել այլ երեխաներին: Մյուս կողմից,որոշակի տեսակի պարգևները, որոնք արդյունավետ են տանը, չեն կարող օգտագործվել դպրոցական միջավայրում:

Այժմ կներկայացնենք անցանկալի վարքագծի կանխարգելման մի քանի տեխնիկաներ,որոնք կիրառվում են հիմնական դպրոցում:

1. Անցանկալի վարքագծի օբյեկտիվ և ճշգրիտ սահմանում: Վարքագիծը ճիշտ նկարագրելը շատ ավելի դժվար է, քան կարող ենք մտածել: Երբ ասում ենք, որ աշակերտը «սկանդալներ է անում» կոնկրետ ինչ նկատի ունենք: Եթե աշակերտը բարձր ձայներ է հանում, դա սկանդալ է համարվում: Եթե չկա վարքագծի ճշգրիտ սահմանում, ապա մասնագետները չեն կարողանա հետևողականորեն կիրառել այն շտկելու ռազմավարությունը, և հնարավոր չի լինի տվյալներ հավաքել վարքագծի հաճախականության վերաբերյալ: Անցանկալի վարքագծի ցանկացած միջամտության առաջին և անհրաժեշտ քայլը ճշգրիտ բացահայտելն է, թե ինչ վարքագծի հետ ենք աշխատում:

2.Վարկած , տվյալ վարքագծի գործառույթի մասին:

Ինչու՞ է աշակերտը այդպես վարվում: Ի՞նչ է նա ուզում կամ ի՞նչ է պետք:

Տիպիկ վարքագծի առանձնահատկությունները ներառում են:

ա)Պահանջներից խուսափելը

բ)Մուտք դեպի ցանկալի իրեր

գ)Ուրիշի ուշադրությունը գրավելը

դ)Զգայական կարիքի բավարարում

Վարքագիծը կարող է ունենալ մեկից ավելի գործառույթ:Պատահական դիտարկումները բավարար չեն վարքագծի գործառույթը որոշելու համար,անհրաժեշտ է աշակերտի վարքագծի անմիջական դիտարկումը:

Պատահական դիտարկումները,որպես կանոն վերաբերվում են միայն այն միջավայրին, որտեղ սկսվել է վարքագիծը (սենյակ, օրվա ժամ,դաս, աղմուկի մակարդակ և այլն)։ Մյուս կողմից, տվյալներ հավաքելու նպատակով աշակերտին ուշադիր հետևելը հնարավություն է տալիս պարզել, թե ինչ է եղել վարքագծից անմիջապես առաջ և ինչն է անմիջապես հաջորդել վարքագծին։Նման տվյալները հաճախ հույս են սփռում վարքի գործառույթի վրա։

Անսրադառնալով վարքագծի գործառույթին՝ պետք է նշել, որ անցանկալի վարքագծի դեպքում ճիշտ կլինի, որ ծնողն ու մանկավարժը մտածեն ոչ թե «ի՞նչ է անում երեխան», այլ «ինչու՞ է երեխան դա անում»։ Դասի ժամանակ դժվարությամբ կենտրոնացող երեխայի վարքագծի ֆունկցիան (վարքագծի պատճառը, «ինչու՞» հարցի պատասխանը) կարող են լինել կողմնակի աղմուկը, մանկավարժի ձայնի բարձրությունը, քաղցի զգացումը, անտեսված լինելու զգացողությունը և այլն։

3.Վարքագծի կանխարգելում։

Երբեմն դիտարկման արդյունքում հավաքված տեղեկատվությունը ցույց է տալիս, որ հնարավոր է փոխել շրջակա միջավայրի պայմաններն այնպես, որ անցանկալի վարքագիծ ընդհանրապես չառաջանա։Սակայն որոշ մանկավարժներ չեն սիրում օգտագործել այս ռազմավարությունները, քանի որ կարծում են , որ դրանք «կզիջեն» աշակերտին, և նա երբեք չի սովորի այլ կերպ վարվել։Օրինակ աշակերտը սկսում է բարձր գոռալ և ընկնում է հատակի մի գործունեությունից մյուսին անցնելու ժամանակ։ Հնարավոր լուծումն այն է, որ այլևս չպահանջվի երեխային ինքնին անցում կատարել։ Այնուամենայնիվ, սա ակնհայտորեն ոչ գործնական և անցանկալի տարբերակ է, մյուս կողմից կարող ենք փորձել ստորև ներկայացված որոշ մեթոդներ։

ա)Ընտրություն տալը մենք կարող ենք աշակերտին հնարավորություն տալ երկու տարբերակից ընտրել, թե ինչ է անելու հետո։

բ)Փոփոխության տեսողական նշաններ։Կարելի է օգտագործել տեսողական ժմչփ կամ բանավոր հիշեցումներ՝ «մնաց 5 րոպե», մնաց 2 րոպե, որպեսզի աշակերտին պատրաստենք անցմանը։

գ)Վարքագծային իներցիայի կիրառում։Աշակերտին տվեք մի շարք պարզ հրահանգներ, որոնք նա վստահաբար հաջողությամբ կկատարի,իսկ հետո հանձնարարեք նրան անցնել հաջորդ գործունեությանը։

դ)Կանխատեսելիության բարձրացում. Համոզվեք, որ անցումները տեղի են ունենում միևնույն ժամանակ կանխատեսելի ձևով։

4.Այլ ցանկալի վարքագծի պարգևատրում.

Պետք է միշտ հիշել , որ վարքագիծը հենց այնպես չի լինում։Յուրաքանչյուր անցանկալի վարք ունի իր գործառույթը։ Հնարավոր է, որ չկարողանանք ազդել վարքի պատճառի վրա,բայց այս դեպքում կարող ենք երեխային սովորեցնել, թե ինչպես արձագանքեն նման իրավիճակին ավելի պատշաճ կերպով։ Դա անելու երկու եղանակ կա։

ա)Այլ ընտրանքային վարքագծի ուսուցում, որն իրականացնում է նույն գործառույթը։ Օրինակ, եթե աշակերտը ամեն անգամ խանգարում է երբ չի ցանկանում դաս անել,ապա կարող եք նրան սովորեցնել հաղորդակցվել և արտահայտել «ես ընդմիջման կարիք ունեմ» կամ « ինձ 5 րոպե հանգսիտ է պետք» մտքերը։ Բայց պետք է հիշել, որ նոր վարքագիծը կարող է փոխարինել նախորդին միայն այն դեպքում, եթե այն պահանջում է նույն (կամ ավելի քիչ) ջանք և հանգեցնում է նույն (կամ ավելի լավ) արդյունքի։

բ)Սովորել, թե ինչպես ավելի լավ դիմանալ տվյալ իրավիճակին։ Ուսուցիչն աստիճանաբար կարող է ավելացնել իր պահանջները և աշակերտը կսկսի սովորել իր պարտականությունները։

5.Կիրառել վարքագծի նվազեցման ընթացակարգեր։

Ակտիվ ռազմավարությունները, որոնք կանխում են անցանկալի վարքագծի առաջացմանը, կարող են բավարար չլինեն այն նվազեցնելու համար։ Երբեմն անհրաժեշտ է լինում անցանկալի վարքագծից հետո ներդնել ռեակտիվ ընթացակարգեր,բայց միշտ անհրաժեշտ է ընտրել ամենաբնական և ամենաքիչ առճակատման տեխնիկան։ Կան բազմաթիվ ռեակտիվ ռազմավարություններ՝ անցանկալի վարքը հիմնական դպրոցում նվազեցնելու համար, այդ թվում

ա)Անհետացում։ Պետք է հեռացնել այն գործոնները, որոնք գտել ենք , որ խրախուսում են անցանկալի վարքագիծը։ Հակառակ տարածված սխալի, որ անհետացումը և անտեսումը հոմանիշ չեն։ Օրինակ, եթե աշակերտը փորձում է խուսափել աշխատանքից, բայց ուսուցիչը անտեսում է նրա անցանկալի վարքագիծը

և պարգևատրում է նրան։ Այս դեպքում մարման ընթացակարգը աշակերտից կպահանջվի շարունակել աշխատել։

բ)«Թայմ աութ» Այն կարող է արդյունավետ լինել միայն այն դեպքում , երբ աշակերտի համար անցանակալի պայման է դասընկերների և ուսուցիչների հետ շփվելը։

գ)Վճարեք վարքագծի համար։ Աշակերտին զրկել հաճելի ցանկալի պահերից (այսինքն արտոնությունների կորուստ)։ Օրինակ եթե աշակերտը ցուցաբերել է անցանկալի վարքագիծ, նրան զրկում են որոշակի «բարիքներից» (ֆիզկուլտուրայի դասին մասնակցելուց կամ համակարգչային խաղեր խաղալուց)։

6.Հավաքել տվյալներ՝ պլանի արդյունավետությունը գնահատելու համար։

Երբ վարքագիծը օրեցօր տարբերվում է, հեշտ է եզրակացնել, որ վարքագծային միջամտությունը գործում է « լավ օրերին» իսկ «վատ օրերին» չի գործում։ Հետևողական տվյալների հավաքագրումը թույլ է տալիս հասկանալ, թե որքանով է արդյունավետ միջամտությունն ընդհանուր առմամբ։

Այս համառոտ ակնարկը միայն այսբերգի գագաթն է։ Յուրաքանչյուր անհատական ռազմավարություն բաղկացած է բազմաթիվ տարրերից, որոնք պետք է հարմարեցվեն երեխայի անհատական հատկանիշներին։ Հաճախ դա պահանջում է շատ ստեղծագործ մոտեցում և այս ռազմավարութունների խորը ուսումնասիրում։

Անցանկալի վարքագիծը կարելի է կանխարգելել ոչ միայն հատուկ ռազմավարությունների միջոցով, այլ նաև հետաքրքիր վարժությունների և խաղերի միջոցով։ Դրանցից առանձնացրել եմ «Ով եմ ես» վարժությունը, որի նպատակն է օգնել աշակերտներին մտածել, թե ինչպիսին են իրենք և ինչ դերակատարում ունեն կյանքում։ Վարժությունը նախատեսված է տասներկու և բարձր տարեկանների համար։

Վարժության քայլերն են՝

1.Նախապես վերցնում ենք թուղթ, գրիչ կամ մատիդ։

2.Աշակերտներից յուրաքանչյուրին տալիս եմ տաս հատ թուղթ և մեկ գրիչ։ Հետո աշակերտներին խնդրում եմ, որ յուրաքանչյուր թղթի վրա գրեն մեկ դեր, որ իրենց կարծիքով իրենք կատարում են դպրոցում։ Օրինակ՝ «ես ավագ եմ», «ես օգնող եմ», «ես անկախ եմ», և այլն։

3.Երբ բոլորը ավարտում են, խնդրում եմ, որ զույգեր կազմեն։ Զույգերը սկսում են ներկայացնել իրենց դերերը միմյանց և քննարկում։ Այնուհետև տալիս եմ հաջորդ

հրահանգը, որ հանեն պակաս կարևորները և պահեն միայն երեք ամենակարևոր դերերը: Դրանք կլինեն այն երեք ամենակարևոր դերակատարումները, որ իրենք ունեն դպրոցում:

4. Այն աշակերտները, ովքեր առավել ակտիվ են ու շատ հաճախ դրսևորում են անցանկալի վարքագիծ խնդրում եմ , որ ներկայացնեն իրենց դերերը:

Իրենց դերերը լսելուց հետո տալիս եմ հետևյալ հարցերը:

- Ի՞նչ էիր զգում, երբ «ջնջում» էիր ընտրված տաս դերակատարումներից յոթը:
- Դժվա՞ր էր միայն երեքը պահելը
- Դժվա՞ր էր երեք ամենակարևոր դերակատարումներն ընտրելը:
- Արդյո՞ք անկեղծ էի, երբ գրում էի դպրոցում իմ ունեցած դերի մասին:

Այս վարժության շնորհիվ կարող ես հասկանալ անցանկալի վարքագծի դրդապատճառները և միարժամանակ կարող են կանխել այն: Քանի որ այդ ազատ միջավայրում աշակերտը ավելի անկեղծ է ու բաց:

Պետք է հիշել, որ անցանկալի վարքագիծ դրսևորած աշակերտի համար շատ կարևոր է խմբի հետ միասին աշխատելը, համագործակցելը, որը իր հերթին օգնում է կանխել անցանկալի վարքագիծը:

Եզրակացություն

Այս հետազոտական աշխատանքը կատարելիս, կրկին անգամ համոզվեցի, որ դպրոցի զարգացման ներկա փուլում ամենակարևորը սաների վարքագծի շեղումները կանխելու համար արդյունավետ աշխատանքի կազմակերպումն է:Եվ, ինչպես գիտենք վարքագծի շեղումների լավագույն կանխարգելումը նպատակաուղղված աշխատանքն է դպրոցում, որն իրականացվում է տարբեր միջոցների, ձևերի և մեթոդների համադրմամբ:

Այսպիսով՝ անցանկալի վարքագծի կանխարգելման հաղթահարման գործընթացը կարևոր է, քանի որ այն մանկավարժների կողմից ամենահաճախ նշվող դժվարությունն է կրթական գործընթացում: Վերջինիս կանխարգելումն ու հաղթահարման արդյունավետ մոտեցումների կիրառումը նպաստում են ինչպես դասարանում տիրող մթնոլորտի բարելավմանը, այնպես էլ կրթական գործընթացի արդյունավետության բարձրացմանը:Իսկ այդ արդյունավետությունը ապահովելու համար կարևոր է, որ վերջինիս նկատմամբ ցուցաբերվի համակարգային մոտեցում: Այդ կերպով, ապահովվում են ռազմավարության կիրառման համար անհրաժեշտ ռեսուրսները և վերջիններիս կայունությունը:

Այսպիսով պետք է արձանագրեմ, որ անցանկալի վարքագծի կանխարգելման համար ռազմավարություններին տիրապետելը բավական չէ: Անհրաժեշտ է հիշել, որ յուրաքանչյուր երեխա տարբեր է, Ուստի շատ կարևոր է, որ մանկավարժը ունենա բավականաչափ հմտություններ երեխայի հասկանալու և օգնելու համար:

Ի վերջո պետք է հիշել.

«Երեխաներին դաստիարակելու համար պահանջվում է ավելի խարաթափանց մտածողություն, քան պետության կառավարման համար»

(Ու. Չենինգ)

Օգտագործված գրականության ցանկ

1. Ավագյան Ա., Բաբայան Լ., Մակարյան Թ.,

«Բարդ իրավիճակների պարզ լուծումներ», Երևան 2020։

2Հարությունյան Ն.Կ. , Ղազարյան Ա. Փ., Ղուկասյան Լ.Հ.,

Սոցիալական մանկավարժություն, Բուհական ձեռնարկ, Երևան 2017։

3.Мухина В. С. Возрастная психология М. 1999, с 345

4.https://www.unicef.org